# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 43 - 44 (16744) ՇԱԲԱԹ 1 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

## ԵՐԿԻՐԸ ՆՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 101-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

***Մայիսի 26-ին Վրաստանը նշեց երկրի Անկախության վերականգնման հռչակագրի ստորագրման եւ Առաջին ժողովրդավարական Հանրապետության կազմավորման 101-րդ տարեդարձը: Տոնի կապակցությամբ, մշակութային, մարզական եւ ժամանցային միջոցառումներ անցկացվեցին Թբիլիսիում, Թելավիում, Օզուրգեթիում, Փոթիում, Ախալքալաքիում, Ախալցիխեում, Մառնեուլիում, Բաթումիում, երկրի մյուս երկրամասերում ու քաղաքներում:***




Թբիլիսիում տոնական միջոցառումները մեկնարկեցին Ռուսթավելու պողոտայում, որտեղ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, վարչապետ Մամուկա Բախտաձեի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի, Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմինների պաշտոնյաների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների եւ հյուրերի մասնակցությամբ, անցկացվեց նորակոչիկների երդման հանդիսավոր արարողությունը:

Թբիլիսիից բացի (288 ռեկրուտ), երդում են տվել նաեւ Վրաստանի այլ շրջաններում, Զուգդիդիում՝ Դադիանների պալատում, Ռաճայում՝ Մրավալձալիի տաճարում, Քարթլիում՝ Ուփլիսցիխեում, Դուշ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ 101-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

***Վրաստանի պետական անկախության վերականգնման հռչակագրի ստորագրման, Վրաստանի Առաջին ժողովրդավարական Հանրապետության կազմավորման 101-ամյա հոբելյանի առիթով Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձներ են հղել Վրաստանի նախագահին եւ վարչապետին:***

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը twitter-ի իր միկրոբլոգում Վրաստանի Անկախության օրվա առթիվ վրացերենով գրառում է կատարել.

«Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Վրաստանի բարեկամ ժողովրդին Վրաստանի ազգային տոնի՝ Պետական անկախության վերականգնման օրվա առթիվ:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք եւ նորանոր հաջողություններ, իսկ Վրաստանի եղբայր ժողովրդին՝ երջանկություն, բարօրություն եւ առաջընթաց»:

***Վրաստանի ղեկավարությանը շնորհավորական ուղերձներ են հղել նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, այլ երկրների ղեկավարներ:***

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՆ

***Մայիսի 31-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, Թբիլիսիում անցկացվեց «Պետական լեզուն՝ Վրաստանում քաղաքացիական ինտեգրման եւ մարդկային կապիտալի զարգացման համար» վերտառությամբ խորհրդաժողով:***




Այն ներածական խոսքով բացեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

- Վրաց լեզուն շատ հարուստ է, եւ նրանով շատ բանի կարելի է հասնել,- այս մասին հայտարարեց Վրաստանի նախագահը եւ հավելեց, որ լեզուն պետության բաղկացուցիչ մասն է, առանց որի, միասնականություն հնարավոր չէ: Իր խոսքում ընդգծելով պետական լեզվի դերը, նրա առջեւ ծառացած մարտահրավերները, աբխազերենի պահպանման անհրաժեշտությանը եւ ազգային փոքրամաս-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԿԱՐԵՎՈՐԸ՝ ՄԵՆՔ ԵԼՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»

***Մայիսի 31-ին Վրաստանի խորհրդարանում, հարցապնդման կարգով, հանդես եկավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն:***

Հարցապնդման կարգով խորհրդարան էին հրավիրված նաեւ առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոյին եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիային:

Մամուկա Բախտաձեին խորհր-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

***Մայիսի 28-ին Հայաստանը եւ աշխարհասփյուռ հայությունը նշեց Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորման եւ Սարդարապատի հերոսամարտի 101-րդ տարեդարձը:***



Այդ օրը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը, պաշտոնատար այլ այրեր, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր այցելած հյուրերի հետ, մասնակցեցին Հանրապետության տոնին նվիրված տոնակատարությանը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՑ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻՑ

Մայիսի 28-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանին շնորհավորելեն Հայաստանի պետական անկախության վերականգնման եւ Առաջին Հանրապետության կազմավորման 101-րդ տարելիցի առիթով:

## ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

***Մայիսի 28-ին Թբիլիսիում հանդիսավորությամբ նշվեց Հայաստանի պետական անկախության վերականգնման հռչակագրի ստորագրման, Առաջին Հանրապետության կազմավորման 101-րդ տարեդարձը:***

Այդ օրը Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը՝ դեսպանության դիվանագետների ուղեկցությամբ, այցելեցին Թբիլիսիի Սովորող երիտասարդ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԵՐԿԿՈՂՄ, ՋԵՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔ

### «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ» ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

***Մայիսի 30-ին Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու հրավերով, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը:***



Այցի շրջանակներում, Հայաստանի կրթության եւ գիտության նախարարը, Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանի ուղեկցությամբ, այցելեց Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոց: Նախարարը ծանոթացավ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ԵՐԿԿՈՂՄ, ՋԵՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔ

## «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ» ԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դպրոցի գործունեությանն ու ծրագրերին, գրադարանին նվիրեց գրքեր, ինչպես նաեւ դիտեց դպրոցի աշակերտների մասնակցությամբ բեմադրությունը: Պատասխանելով կրթօջախի մանկավարժների կողմից հայկական դպրոցները մայրենի լեզվով դասագրքերով ապահովելու մասին հարցին՝ Արայիկ Հարությունյանը նշեց, որ հարցի շուրջ քննարկումներ են նախատեսված վրացի գործընկերոջ հետ, մայրենի լեզվի դասագրքերի հարցն օրակարգում է:



- Ամենակարեւորն այն է, որ երկկողմ, ինչպես նաեւ երկու նախարարների միջեւ շատ ջերմ հարաբերություններ են, իսկ դա այն ամենակարեւոր հիմքն է, որը նպաստում է հարցերի լուծմանը,- ասաց Արայիկ Հարությունյանը:

Օրվա երկրորդ կեսին կայացավ երկու երկրների նախարարների հանդիպումը, որի ընթացքում կողմերը քննարկեցին բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության, փորձի փոխանակման, Վրաստանում հայալեզու դպրոցներում «Հայոց լեզվի» դասաժամերին ու դասագրքերին առնչվող հարցեր:

Արայիկ Հարությունյանը բարձրացրեց հայալեզու դպրոցների ուսուցիչների վերապատրաստման, մայրենիի դասաժամերի հարցը:

Կողմերը պայմանավորվեցին, Հայաստանում նախարարությունների վերակազմավորման գործընթացից հետո, զարկ տալ երկու նախարարությունների ենթակայության տակ գտնվող ոլորտային ուղղություններով երկկողմ աշխատանքային խմբերի սերտ համագործակցությանը:

Երկու երկրների նախարարների հանդիպման ավարտից հետո, Արայիկ Հարությունյանը, անդրադառնալով դասագրքերի հարցին, նշեց, որ համաձայնության են եկել պատշաճ ժամանակին Հայոց լեզվի եւ գրականության դասագրքերը տեղ հասցնելու վերաբերյալ:



- Պայմանավորվել ենք, որ մինչեւ սեպտեմբեր դասագրքերը տեղում կլինեն, այսինքն՝ դասագրքերի հետ կապված խնդիրներ չեն լինի: Երկրորդ հարցն ուսուցիչների վերապատրաստումն էր՝ պայմանավորվել ենք խումբ ստեղծել, որը կուսումնասիրի մեթոդաբանությունը, բացի այդ, կներգրավենք նաեւ համապատասխան մասնագետների,- ասաց Արայիկ Հարությունյանը:

Այնուհետեւ, Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը եղավ Թբիլիսիի Հավլաբարի թաղամասում կառուցվող պետական հայկական դրամատիկական թատրոնի շինհրապարակ, ծանոթացավ մշակութային օջախի շինարարական աշխատանքներին: Նախարարին ու Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանին թատրոնի տարածքում դիմավորեցին թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան եւ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Արայիկ Հարությունյանին ցույց տվեցին թատրոնի ճակատամասի եւ դահլիճների մակետների նկարները:

Արմեն Բայանդուրյանը նախարարի հետ զրույցում ներկայացրեց թատրոնի ներկայիս վիճակը, խոսեց հյուրախաղերի, ներկայացումների, ինչպես նաեւ թատերական ստուդիայի մասին: Նա խոսեց նաեւ երկլեզու եւ հայ-վրացական համագործակցության շրջանակներում ստեղծված ներկայացումների կարեւորության մասին:

Նույն օրը Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոնում Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը մասնակցեց վրաց գրող Գիվի Սիխարուլիձեի «Յամուր» վեպի հայերեն թարգմանության շնորհանդեսին: Վեպը թարգմանել է Մկրտիչ Գրաբսկին:

Պաշտոնական այցի շրջանակներում Արայիկ Հարությունյանը եղավ նաեւ Վրաստանի ազգային թանգարանում:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ



***Մայիսի 24-ին Վրաստանի պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին, աշխատանքային այցով, գտնվում էր Երեւանում: Այցի շրջանակներում, նա հանդիպում ունեցավ Հայաստանի ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արթուր Վանեցյանի հետ:***

Հանդիպմանը Վրաստանի եւ Հայաստանի անվտանգության գերատեսչությունների ղեկավարները քննարկեցին երկու երկրների անվտանգության ծառայությունների փոխգործակցության հեռանկարները, տարածաշրջանային ներկա զարգացումները, ինչպես նաեւ՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Կողմերն անդրադարձան նաեւ երկու պետությունների անվտանգության ծառայությունների միջեւ համագործակցության զարգացման, տեղեկատվության եւ փորձի փոխանակման վերաբերյալ հարցերին:

Վախթանգ Գոմելաուրին եւ Արթուր Վանեցյանը, գործընկերային ջերմ եւ բարեկամական մթնոլորտում կայացած հանդիպման ընթացքում, ընդգծեցին հարաբերությունների կայուն զարգացման ու խորացման կարեւորությունը:

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ների պալատ, որտեղ, 101 տարի առաջ այդ օրը, Հայոց Ազգային խորհուրդն ընդունեց Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակագիրը:

Դեսպանը ծաղիկներ դրեց այդ իրադարձությանը նվիրված հուշատախտակի մոտ, հարգանքի տուրք մատուցեցին Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր հայրերի հիշատակին:

Տոնի առթիվ, Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում հնչեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու պայծառության եւ նրա ժողովրդի խաղաղ ու բարեբեր կյանքի համար:

Այնուհետեւ, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հանրապետության օրվան:



Վրաստանում ՀՀ դեսպան Ռուբեն Սադոյանն իր ելույթում անդրադարձավ օրվա խորհրդին եւ խոսեց Հայաստանի Առաջին Հանրապետության դերի ու նշանակության մասին:

Բանախոսությամբ հանդես եկավ պատմաբան Ենոք Թադեւոսյանը:

Ցուցադրվեց վավերագրական ֆիլմ, երգերի եւ երաժշտական կատարումներով հանդես եկան «Հայարտուն» կենտրոնի սաները:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ՉԵՂԱՎ

*Գերագույն ռադան չընդունեց Ուկրաինայի վարչապետ Վլադիմիր Գրոյսմանի հրաժարականը: Պաշտոնաթողության վերաբերյալ կառավարության ղեկավարի խնդրանքը մայիսի 30-ին պաշտպանել է 97 պատգամավոր՝ անհրաժեշտ նվազագույն 226-ի դեպքում:*

*Ուկրաինայի վարչապետը պաշտոնաթող լինելու որոշման մասին հայտարարել էր մայիսի 20-ին, այն բանից հետո, երբ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, պաշտոնակալության արարողության ժամանակ Ուկրաինայի ժողովրդին հղած ուղերձում, հայտարարեց, որ կառավարությունը պետք է վայր դնի լիազորությունները:*

*Ուկրաինայի սահմանադրությանը համապատասխան, կառավարությունը հրաժարական է տալիս ռադայի նոր կազմի ընտրվելուց հետո, եւ ոչ թե նոր նախագահի ընտրվելուց հետո:*

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԲԱՇԽՈՒՄ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*Մայիսի 23-26-ը Եվրամիությունում կայացած Եվրախորհրդարանի ընտրություններին մասնակցությունը կազմել է 50,5 տոկոս, ինչը 8 տոկոսային կետով ավելի է, քան 2014 թվականին:*

*Եվրախորհրդարանի ընտրությունների նախնական արդյունքներով, ամենամեծ բլոկը աջ-կենտրոնամետ «Եվրոպայի ժողովրդական կուսակցությունն է»: Արդյունքները ցույց են տալիս, որ 751 տեղ ունեցող Եվրախորհրդարանում «Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը» ունենալու է 179 տեղ: 2014 թվականի ընտրություններին կուսակցությունն ուներ 216 տեղ:*

*Նախնական տվյալներով, երկրորդ տեղում է «սոցիալիստների եւ դեմոկրատների» դաշինքը, որը եվրախորհրդարանում հավանաբար կունենա 150 տեղ: 2014 թվականին նրանք խորհրդարանում ունեին 191 տեղ:*

*Երրորդ տեղում է լիբերալ «Ալդե» խումբը, որն այս պահին Եվրամիության խորհրդարանում ունի 107 տեղ:*

*Ընտրություններին լավ արդյունք են գրանցել եւ ամրապնդել իրենց դիրքերը կանաչները, նրանք մինչ այս ունեին 50 տեղ, իսկ այս ընտրություններին ստացել են 70 մանդատ:*

ԼԻՏՎԱ

## ԳԻՏԱՆԱՍ ՆԱՈՒՍԵԴԱՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Լիտվայում անցկացվեց նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Ընտրությունների արդյունքներով, հաղթել է Գիտանաս Նաուսեդան: Նա ստացել է ձայների 65,86 տոկոսը, Լիտվայի ֆինանսների նախկին նախարար Ինգրիդա Սիմոնիտեն ՝ 32,86 տոկոսը:*

*Նշենք, որ Լիտվայում նախագահական ընտրությունների առաջին փուլը տեղի է ունեցել մայիսի 12-ին: Առաջին փուլում 50 տոկոսանոց պատնեշը ոչ մեկը չի հաղթահարել:*

*«Եվրանյուսը» գրում է, որ Գիտանաս Նաուսեդան խոստացել է շարունակել գործող նախագահի, «Երկաթե լեդի» Դալյա Գրիբաուսկայտեի կողմից սահմանված քաղաքականությունը:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ՍՈՒՐԲ ՆԻՆՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՍ ԿԱՆՑՆԵՄ ՍՈՒՐԲ ՆԻՆՈՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»



*Հունիսի 1-ին Վրաստանը նշում է Սուրբ Նինոյի օրը: Այդ կապակցությամբ, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ, անցկացվեց «Մշակութային երթուղիները՝ Վրաստան, Եվրոպա» խորագրով հանդիսավոր միջոցառմանը, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ այդ օրը ինքն անցնելու է Սուրբ Նինոյի ճանապարհով:*

Նախագահի հավաստմամբ, այս ճանապարհով եվրոպացիները կհասկանան, թե ինչպիսին է եվրոպական Վրաստանը, իսկ ուղիները կարեւոր են ինչպես մշակութային, այնպես էլ՝ զբոսաշրջության, տնտեսական եւ տարածաշրջանային զարգացման հեռանկարների առումով:

- Այս ուղիները կբացահայտեն մեր մարզերը, ինչը տարածաշրջանի ճիշտ զարգացման խթան կդառնա: Այսօր էլ շատ մարդիկ Եվրոպայում հետաքրքրված են ուխտագնացությամբ, եւ ես հունիսի 1-ին պատրաստվում եմ անցնել Սուրբ Նինոյի ճանապարհը,- հայտարարեց նախագահը:

Նշենք, որ Սուրբ Նինոն եղել է Սուրբ Հռիփսիմյանց կույսերից մեկը, նրանց հետ Հռոմից հասել Հայաստան: Վարագա լեռան մոտ առանձնացել է ընդհանուր խմբից եւ մեկնել Վրաստան: Առաջին կանգառը կատարելով Փարվանա լճի ափին՝ նա ճգնողական կյանքը շարունակել է Մցխեթա քաղաքի մոտակայքում: Այստեղ քրիստոնեություն է քարոզել եւ «Սուրբ Հոգու զորությամբ» կատարել բժշկումներ: Ըստ ավանդության, կույսը բուժել է Վրաց Միհրան թագավորի հիվանդ զավակին՝ նրան խաչակնքելով, ապա բժշկել նաեւ հիվանդացած Նանա թագուհուն:

***Հունիսի 1-ին, ավանդաբար, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկայի մենաստանի մոտ, Փարվանա լճի ափին, հանդիսավորապես նշվում է Սուրբ Նինոյի տոնը:***



### ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ՝ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ

*Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտարարությամբ, Մթածմինդայում խորհրդարանական միջանկյալ ընտրությունների երկրորդ փուլը տեղի է ունենալու հունիսի 9-ին:*

*Ընտրողները ընտրություն են կատարելու «Վրացական երազանքի» թեկնածու Լադո Կախաձեի եւ «Եվրոպական Վրաստանի» թեկնածու Շալվա Շավգուլիձեի միջեւ:*

### ՏԱՍԸ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությունը, Վրաստանի ֆերմերների ասոցիացիայի Land O’Lakes International Development-ի եւ Միչիգանի համալսարանի հետ, գործընկերությամբ սկսում է նոր ծրագիր:*

*Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ գյուղատնտեսության նախարարության «Ապրանք առաջընթացի համար» (Food for Progress SQIL) ծրագրի շրջանակներում, ենթադրում է 10 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում:*

*Նշված գումարը կօգտագործվի Վրաստանում առկա խոշոր եղջերավոր անասունների կաթի ու մսի արդյունաբերությունում ապրանքի անվտանգության եւ որակի չափանիշների բարելավմանը:*

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԿԱՐԵՎՈՐԸ՝ ՄԵՆՔ ԵԼՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»



(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարան էր հրավիրել «Եվրոպական Վրաստանը» եւ հարցապնդման կարգի համաձայն, նրան նախապես ուղարկել հարցեր, որոնք առնչվում էին ազգային տարադրամի արժեզրկմանը, երկրում սպառողական գների ավելացմանը, բանկային կանոնակարգերին: Հարցերի թվում էին նաեւ բռնազավթման գոտում ստեղծված իրավիճակը, դատական բարեփոխումները, աղմկահարույց քրեական գործերը: Անդրադառնալով սոցիալական հարցերի թեմային՝ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ կառավարող թիմը, ելնելով առկա հնարավորություններից, ցանկանում է մեր քաղաքացիների համար ստեղծել արժանի կենսաթոշակային համակարգ եւ, որ աշխարհի որեւէ հաջողակ երկիր արժանի կենսաթոշակի չի հասել առանց կենսաթոշակային հիմնադրամների:

- Սա է ճշմարտությունը, սա է տնտեսական օրինաչափությունը: Այնպես որ, աքսիոմաների մասին վիճելն անիմաստ է: Դրա վրա զուր ժամանակ չվատնենք: Պետք է զրուցենք դրանց բովանդակային կողմի մասին,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Նրա խոսքով, եթե հարցերի հեղինակները 15 տարի առաջ ունենային նման տեսլական, համարձակություն, եւ սկսվեր բարեփոխում, այսօր կենսաթոշակը կլիներ երկու անգամ ավելի, եւ չէին լինի նման սուր հարցեր:

Ավելացնենք, որ վարչապետի ելույթը եւ հարցերին տրված պատասխանները հնչեցին տեղերից պատգամավորների բացականչությունների ֆոնի վրա: Ի նշան բողոքի, առանձին պատգամավորներ լքեցին նիստերի դահլիճը:

ՏԱՐԱԴՐԱՄ

## ԼԱՐԻԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ «ՌԵԿՈՐԴԸ»

***Վրաստանի ազգային տարադրամ լարին, ամերիկյան դոլարի նկատմամբ, սահմանեց 2016 թվականի դեկտեմբերի 22-ին վավերացված լարիի ամենանշանակալի արժեզրկումը գերազանցող նոր ռեկորդ: Պաշտոնական տվյալներով, մեկ դոլարի դիմաց տրվում է 2,8 լարի: Տարվա սկզբից լարիի արժեզրկումն արդեն գերազանցել է 3 տոկոսի նշագիծը:***



Իշխանությունների պարզաբանմամբ, լարիի սույն արժեզրկումը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով: Մասնավորապես, այն կապում են թուրքական լիրայի նշանակալից արժեզրկման հետ: Ինչպես նշեց Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, թուրքական լիրայի արժեզրկումը նշանակալի ազդեցություն գործեց լարիի ինքնարժեքի վրա, քանի որ երկրի էկոնոմիկան խորապես կապված է Թուրքիայում ստեղծված տնտեսական վիճակի հետ: Նախարարի հավաստմամբ, ազգային տարադրամի նման կարճաժամկետ տատանումները բնորոշ են զարգացող, առանձնապես փոքր էկոնոմիկա ունեցող երկրների համար:

- Դա նորմալ երեւույթ է: Տատանումները հաճախ ուղեկցվում են իրարանցումներով, ինչն է՛լ ավելի է ազդում այդ տատանման վրա: Ի վերջո տատանումը կդադարի, երբ կհաստատվի նորմալ համարժեք,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ արժեզրկման կանխման լավագույն միջոցը ապադոլարիզացումն է, որը եւ իրականացվում է:

Ի տարբերություն իշխանությունների, ընդդիմությունը լուրջ տագնապ է արտահայտում լարիի արժեզրկման կապակցությամբ եւ իշխանություններին կոչ անում հրատապ միջոցներ ձեռնարկել հարցի կարգավորման համար: Ընդդիմության հավաստամբ, լարիի արժեզրկումը պայմանավորված է իշխանությունների կողմից իրականացվող տնտեսական թերի քաղաքականությամբ, ինչը բացասաբար է անդրադառնում շարքային քաղաքացիների բարեկեցության վրա: Որպես ապացույց՝ ընդդիմությունը ներկայացնում է Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալները, ըստ որի, 2019 թվականի ապրիլին, նախորդ ամիսների համեմատ, ընտանեկան զամբյուղն աճել է 3,8 լարիով: Ապրիլին աշխատունակ տարիքի տղամարդու ընտանեկան զամբյուղը 185 լարի է կազմում, այն դեպքում, երբ մարտին այս ցուցանիշը 181,2 լարի էր:

2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, ապրիլին աշխատունակ տղամարդու ընտանեկան զամբյուղը 8,1 լարիով է աճել: Մասնավորապես, 2018թ. ապրիլին այս ցուցանիշը կազմում էր 176,9 լարի:

Վիճակագրության տվյալներով, մարտի համեմատ, ապրիլին 3,4 լարիով աճել է միջին սպառողի ընտանեկան զամբյուղը եւ կազմել 163,9 լարի:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***



ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

# ԵՐԿԻՐԸ ՆՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 101-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)





եթիում՝ Անանուրիի բերդ-ամրոցում եւ Ղվարելիում՝ Գրեմիի տաճարում:

Տոնի առիթով իր խոսքում Մամուկա Բախտաձեն երկրի բնակիչներին շնորհավորեց պետական անկախության վերականգնման տարելիցի առթիվ՝ նշելով, որ համատեղ ջանքերով երկիրը կարող է հաղթահարել բոլոր խոչընդոտները, վերադարձնել բռնազավթված տարածքները եւ ստեղծել միասնական հզոր պետություն:

- Այսօր՝ մայիսի 26-ին, տոնը մեզ հետ միասին նշում են մեր բարեկամ երկրները, եւ ցանկանում եմ դիմել նրանց, միջազգային հանրությանը, որ անպայմանորեն կհասնի այն օրը, երբ ողջ աշխարհը կրկին կդառնա ամենակրթված, մեկ բռունցք դարձած խաղաղ, միասնական եւ հզոր Վրաստանի վկան,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Իր խոսքում, վարչապետը տոնի առթիվ շնորհավորեց նաեւ աբխազ եւ օս համաքաղաքացիներին:

- Մեր նախնիները թիկունք-թիկունքի պայքարում էին մեր ընդհանուր հայրենիքի խաղաղության եւ բարեկեցության համար: Ցանկանում եմ ասել, որ ձեզանից յուրաքանչյուրի ցավը Վրաստանի ցավն է, իսկ Վրաստանի յուրաքանչյուր հաջողությունը՝ ձեր հաջողությունը: Մենք Վրաստանի ապագան պատկերացնում ենք միայն ձեզ հետ միասին,- ընդգծեց վարչապետը:

Իր խոսքում, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին խոսեց երկրի անկախության վերականգնման պատմական իրադարձության նշանակության եւ նորաստեղծ Վրաստանի շինարարության գործում դրա արտակարգ դերի մասին: Նախագահի խոսքով, երկրի անկախությունը ձեռքբերում է, որը մշտապես պաշտպանության կարիք ունի:

- Մենք առօրյա պետք է կառուցենք, ամրապնդենք եւ պաշտպանենք գլխավոր հիմքերը, որի վրա կանգնած է պետականությունը,- հայտարարեց նախագահը: Նա անդրադարձավ նաեւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին՝ նշելով, որ դրանց կարգավորման գլխավոր մայրուղին եվրաինտեգրումն է:

Հանդիսավոր միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարներ Դավիթ Զալկալիանին եւ Լեւան Իզորիան:

Տոնի առիթով, Վրաստանի նախագահի նստավայրում կայացավ պաշտոնական ընդունելություն:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



նությունների լիարժեք քաղաքացիական ինտեգրման համար պետական լեզվի իմացության նշանակությունը՝ նախագահը հայտարարեց, որ անհրաժեշտ է՝ ազգային փոքրամասնություններն ունենան լեզուն սովորելու բոլոր հնարավորությունները, լեզվի ուսուցումը պետք է սկսվի մանկապարտեզներում եւ շարունակվի դպրոցներում ու համալսարանում, պետական լեզվի իմացությունը պետք է լինի հասարակական կյանքին ինտեգրման գլխավոր գործիք:



Կենտրոնում՝ Սերգեյ Կարախանյանը

- Մենք այն հանդուրժող երկիրն ենք, որտեղ բազում այլ ծագում ունեցող մարդիկ են ապրում, որտեղ կողք-կողքի բնակվում են ադրբեջանական եւ հայկական ծագում ունեցող քաղաքացիներ, որտեղ մենք շատ բան ենք անում, որպեսզի իրենց մայրենի լեզվով սովորեն եւ չկորցնեն իրենց ավանդույթները, մշակույթը, լեզուն: Սակայն, այսօր գլխավոր մարտահրավերը պետության եւ ինձ համար այն է, որ վրաց լեզուն նրանց համար նույնպես դառնա մայրենի լեզու, այլազգիներն ունենան բոլոր հնարավորությունները եւ վրաց լեզվի իմացությամբ կարողանան դառնալ Վրաստանի լիարժեք քաղաքացի, ոչ թե խիտ բնակեցված շրջանների բնակիչներից մեկը: Սա մեծ մարտահրավեր է ինձ եւ բոլորի համար,- նշեց Սալոմե Զուրաբիշվիլին:

Խորհրդաժողովում զեկուցումով հանդես եկավ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:

Ելույթ ունեցողների թվում էր Նինոծմինդայի քաղաքացիական ռեեստրի ծառայության պետ Սերգեյ Կարախանյանը:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՇԵՄՈՍԱՎԼԵԲԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼԻՍ՝ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ

## ԻՆՉՊԵՍ ՎՐԱՍՏԱՆԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ.**

**եթե Վրաստանի միջազգային համաձայնագրերով այլ ոչինչ չի նախատեսված, ապա օտար երկրում գրանցված տրանսպորտային միջոցի (դատարկ կամ բեռնավորված) կողմից, Վրաստանի սահմանը հատելիս, լրացուցիչ ներկայացվելու է հետեւյալ փաստաթղթերից որեւէ մեկը.**

* կամ ավտոտրանսպորտի միջոցով բեռի միջազգային փոխադրման թույլտվությունը,
* կամ ավտոմոբիլով միջազգային բեռնափոխադրումների ավտորիզացիան,
* կամ Վրաստանի տարածքից միջազգային բեռնափոխադրման թույլտվությունը:

**ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԱՆՑԻԿ ԲԵՌԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՍԱԿԱԳԻՆԸ.**

* Վրաստանի մաքսային տարածքով բեռի տարանցիկ փոխադրման համար, մեկ բեռնատար ավտոմեքենայի հաշվով ճանապարհից օգտվելու սակագինը կազմում է 200 լարի:
* Բեռնատար ավտոմեքենայով բեռի տարանցիկ փոխադրման դեպքում, ավտոտրանսպորտի սեփականատերը կամ վարորդը պարտավոր է մինչեւ Վրաստանի մաքսային տարածքից հեռանալը,
* ձեռք բերել ճանապարհից օգտվելու տոմս,
* ապահովել ճանապարհից օգտվելու սակագնի վճարումը Վրաստանի տարածքում գործող բանկային հաստատություններում գանձարկղային հետեւյալ կոդով՝ 302003277:
* Տարածքը թողնելու ժամանակ, մաքսային անցակետում ներկայացնի բանկային հաստատությունում ճանապարհից օգտվելու սակագնի վճարումը հաստատող կտրոնը կամ ճանապարհից օգտվելու տոմսը: Հակառակ դեպքում, տրանսպորտային միջոցը չի թողնի երկրի տարածքը:



* Ճանապարհից օգտվելու սակագնից ազատվում են այն անձինք, ովքեր բեռնատար ավտոմեքենայով իրականացնում են Վրաստանի տարածքում, սահմանային նավահանգիստներում գործող մաքսային անցակետերի տարածքում, նախատեսված բեռների փոխադրումը հարկային մարմնի կողմից սահմանված երթուղով, սահմանային նավահանգստի տարածքից մոտակա 10 կիլոմետր շառավիղում գտնվող վերահսկիչ գոտում կամ՝ հակառակը:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Մաքսային վերահսկողության իրականացման ժամանակ մաքսային անցակետի աշխատակիցը իրավասու է.**

* իրականացնել ուղեւորի բանավոր հարցում,
* ստուգել անձնական բեռը, ուղեւորաբեռը, տրանսպորտային միջոցը,
* իրականացնել ուղեւորի ֆիզիկական խուզարկումը (խուզարկության ընթացքում հնարավոր է օգտագործեն հատուկ տեխնիկական միջոցներ, ինչպիսիք են՝ մետաղադետեկտոր, մարմնի սկանավորում եւ այլն):

**ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼԻՍ՝ Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ Է ԾԱԳՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԱՊՐԱՆՔԻ ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.**

* տնտեսական գործունեության համար նախատեսված ապրանքի ներկրման կամ արտահանման ժամանակ (անկախ դրա քանակությունից եւ արժեքից),
* այն դեպքում, երբ ապրանքի ներկրումը սահմանափակ է կամ ապրանքի ներկրման համար անհրաժեշտ է թույլտվություն կամ հավաստագիր,
* այն դեպքում, երբ ներկրվող ապրանքի քանակը կամ արժեքը գերազանցում է Վրաստանի հարկային օրենսգրքով սահմանված չհակադրվող նվազագույնին,
* հարկային օրենսգրքով նախատեսված արտասահմանում յուրաքանչյուր վեց ամսից ավելի գտնվելու եւ Վրաստանում մշտապես բնակվողի համար եկամուտների համար գործող արտոնություններից օգտվելու դեպքում,
* Վրաստանի մաքսային սահմանը հատողի մոտ կանխիկ գումարի (ազգային կամ օտարերկրյա տարադրամի) բանկային գրքույկների կամ ֆինանսական այլ արժեթղթերի դեպքում, եթե դրանց ընդհանուր գումարը գերազանցում է 30 հազար լարին կամ այլ տարադրամով դրա համարժեքին:

**Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԱՐՈՐԴԸ ՍԱՀՄԱՆՈՎ ԲԵՌԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ.**

* տրանսպորտային ապրանքագիրը կամ TIR գրքույկը,
* ապրանքը գնելու փաստաթուղթը,
* ապրանքի գնման պայմանագիրը,
* կամ հաշվեհամարը (ինվոյսը),
* կամ հաշվարկային այլ փաստաթուղթը,

*անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ պետք է ներկայացնել թույլատրագիր-հավաստագիրը:

*Այցեգրերի վերաբերյալ տեղեկատվության ստացման համար, օգտվեք Վրաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք-էջից՝ www.mfa.gov.ge:*

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ